ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

ՄՈՒԹ ԳՈՐԾԵՐ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Գիտությունների ազգային ակադեմիայի 82-ամյա նախագահ Ֆադեյ Սարգսյանին ընդադատության ենթարկելու անգամ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի փորձը ձախողվեց ԳԱԱ հաշվետու ժողովի ժամանակ:

Իսկ ԳԱԱ ակադեմիկոսները, որ իրենց դիրքորոշումն ազատ արտահայտելու բացառիկ այդ հնարավորությունը բաց թողեցին, շարունակում են առ այսօր միայն ակադեմիայի կուլիսներում շշուկով պատմել, թե ինչպես է Ֆադեյ Սարգսյանը, ըստ նրանց, խաբեությամբ ԳԱԱ նախագահի ընտրություններ կազմակերպել: Մեր բավական հայտնի ակադեմիկոսներից մեկը միայն օրերս մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ պատմում էր, որ ԳԱԱ նախորդ տարվա ընդհանուր ժողովի ժամանակ հայտարարված ընդմիջումից հետո, երբ ակադեմիկոսների մի մասն արդեն գնացած է եղել, շատ անսպասելիորեն հայտարարվել է ընտրությունների մասին, եւ երբ ոմանք բողոքել են, Ֆադեյ Սարգսյանը հայտարարել է, որ մի քանի ժամ նախագահականում հերթ կանգնելուց հետո մտել է Քոչարյանի մոտ, ու վերջինս ասել է, թե գնա ընտրվի: Եւ քանի որ Ֆադեյ Սարգսյանը շատ գործնական մարդ է, չսպասելով ընտրությունների ժամկետին, որոնց մնացել էր ընդամենը երկու ամիս, առանց ընդհանուր ժողովի օրակարգի մեջ ընտրությունների մասին որեւէ բան նշելու, առանց ակադեմիկոսներին մտածելու հնարավորություն տալու, շտապել է երրորդ անգամ 5 տարով վերընտրվել ԳԱԱ նախագահ: Նրա պաշտոնավարման այս երրորդ ժամկետի եւ դրան նախորդած տարիների ընթացքում ԳԱԱ ակադեմիկոսները միայն ակնարկներով են համարձակվել կիսաձայն խոսել, որ ակադեմիայում ֆինանսական զեղծարարություններ ու անհասկանալի բաներ են տեղի ունենում: Բայց, որքան էլ զարմանալի է, Ֆադեյ Սարգսյանի պաշտոնավարման օրոք առաջին անգամ ԳԱԱ ակադեմիկոսներից մեկը որոշել է բարձրաձայն խոսել ակադեմիայում տեղի ունեցող երեւույթների մասին:

Գիտությունների ազգային ակադեմիայի Ֆունդամենտալ գրադարանի տնօրեն, ակադեմիկոս Անրի Ներսիսյանը լրջագույն մեղադրանքներ է ներկայացրել ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանին: Անրի Ներսիսյանը, որը փաստորեն միակն էր, որ դեռ մարտին կայացած ակադեմիայի ընդհանուր ժողովի ժամանակ պահանջեց անբավարար գնահատել ակադեմիայի աշխատանքը եւ չեղյալ համարել նախագահի ընտրությունները, այժմ Ֆադեյ Սարգսյանին մեղադրում է կոռուպցիայի մեջ՝ բերելով հիմնավոր փաստեր: Բոլոր այդ փաստերը ակադեմիկոսը տեղադրել է ինտերնետային իր սայթում եւ դրանց կարելի է ծանոթանալ http://nersessian.yournetworkservices.com հասցեում: Այսպիսով, դեռ մի քանի տարի առաջ «Գյուլբենկյան» հիմնադրամի օգնությամբ ակադեմիայի նախագահության շենքը եւ հարակից մի քանի ինստիտուտների շենքերը Ֆադեյ Սարգսյանն ապահովում է ջեռուցմամբ: Դրա համար տեղադրվում են «Viessmann» ֆիրմայի ժամանակակից կաթսաներ, որոնք, սակայն, 2004 թվականին աղամոնտաժվում են եւ առ այսօր թափված են ակադեմիայի բակում (նկարում): Փոխարենը, Ֆադեյ Տաճատիչին հաջողվում է Արեւմուտքից շատ ավելի ժամանակակից կաթսաներ ձեռք բերել, որոնց միայն տեղադրման համար, ինչպես նշված է ԳԱԱ 2004 թվականի հաշվետվության մեջ, ծախսվում է 127 միլիոն դրամ: Ընդ որում, այդ գումարը ԳԱԱ-ին հատկացվում է բյուջեի պահուստային ֆոնդից: Երբեկ, երբ մենք փորձեցինք այս կապակցությամբ մեկնաբանություն ստանալ Ֆադեյ Տաճատիչից, նա ասաց, որ «Viessmann»-ի կաթսաներն աղամոնտաժվել են, քանի որ դրանց խողովակները բարակ էին, եւ դրանք դժվար էին գործածվում: Ու քանի որ մասնագետները, ըստ նրա, ասել են, թե դրանց վերանորոգումն ավելի թանկ կնստի, քան նոր համակարգի տեղադրումը, հին կաթսաներն աղամոնտաժվել են: Այնինչ, մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ Անրի Ներսիսյանն ասում էր, որ սույն կաթսաները մինչեւ վերջ էլ նորմալ աշխատել են եւ դրանց հետ որեւէ խնդիր երբեւէ չի առաջացել: Ֆադեյ Տաճատիչը մեղադրվում է նաեւ շինարարական աշխատանքների միջոցով պետական հսկայական միջոցներ փոշիացնելու մեջ: Ըստ Անրի Ներսիսյանի, խոսքը 100 միլիոնավոր դրամների մասին է, ընդ որում, աշխատանքները, որպես կանոն, միշտ կատարում է միեւնույն կազմակերպությունը՝ «Ակունքշինը»՝ ակնհայտ բարձր գներով եւ ցածր որակով: Ակադեմիկոսի այս պնդման վառ ապացույցը ԳԱԱ 2000-04թթ. պաշտոնական ֆինանսական ցուցանիշներն են: Եթե նայում ենք գրաֆիկին, տեսնում ենք, որ միայն 2004-ին ԳԱԱ-ն որպես աշխատավարձ բաշխել է 860 միլիոն դրամ, սարքերի եւ գույքի ձեռքբերման համար ծախսել է 137 միլիոն դրամ, իսկ այլ ծախսերի, այսինքն, շինարարության վրա՝ 1 միլիարդ 26 միլիոն դրամ: Այսինքն, ԳԱԱ նախագահության համար շինարարությունը շատ ավելի կարեւոր ու առաջնային է,



քան գիտական փորձերի համար սարքավորումների ձեռքբերումը: Ըստ Անրի Ներսիսյանի, «Ակունքշին» կազմակերպության ետեւում կանգնած է Ֆադեյ Տաճատիչի ընկերը: Երեկ նա դա նույնպես խոստովանեց: Ըստ Տաճատիչի, «Ակունքշինի» ղեկավարը շինարարության նախկին նախարար Լեւոն Շահբազյանն է: «Մեր բախտն էր, որ այդ կազմակերպությունը կար»,- երեկ ասում էր Ֆադեյ Սարգսյանը: Ըստ նրա, սույն կազմակերպությունն այնքան բարի է գտնվել, որ շինարարական բազմաթիվ աշխատանքներ արել է առանց նախօրոք գումար պահանջելու, ու հիմա ԳԱԱ-ն պարտքեր ունի նրանց: Երբ մենք նշեցինք նաեւ Անրի Ներսիսյանի ներկայացրած մյուս մեղադրանքները, Ֆադեյ Սարգսյանն ասաց, թե նա ինչ ուզում, խոսում է, եւ կա համապատասխան ակտ, որ Աժ վերահսկիչ պալատի, Ֆիննախի եւ դատախազության ստուգումներից հետո ոչ մի խախտում ԳԱԱ-ում չի հայտնաբերվել: Իսկ Անրի Ներսիսյանը Ֆադեյ Սարգսյանին մեղադրում է նաեւ Ֆունդամենտալ գրադարանի տարածքն առանց իր գիտության ինչ-որ կազմակերպության 10 տարով տալու, ԳԱԱ հաշվեհամարներում գտնվող փողերը՝ 400 հազար դրամ, թաքցնելու մեջ:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ